Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, մարտի 7-ին. Թիֆլիս. №10.



ԱՐՑՈՒՆՔԻ ԱՄՐՈՑԸ

Худож.-Лит. С. Быкова, Тифлисъ.

[illegible]

## ՍԱԲՈՒՐՈՎԻ ՖԱՐՍԸ ԹԻՖԼԻԶԻ ԱՐՔՈՒՆԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ



ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է 4 Տարի

„ԽԱԹԱԲԱԼԱ“

Գրգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր.
Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր.

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Մօսկովսկայա փ. № 19

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція Хатабала“ Московская № 19
Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala“.
Խմբ. հրատարակող՝ ԱԶՏ. ԵՐԻՑԵԱՆ

«Խաթաբալին» բաժանորդ կարելի է գրւել խմբագրատանը Մօսկովսկայա № 19-ը և «Գուտենբերգ» գրախանութում։

# ԻՄ ԴԱՐԴԻՐԸ

Ջիմ գիդում ինչի, համա սիրտս ասում է, վուր աշխարքս էլ էն չէ, ինչ վուր կեր առաք, վաղ, թի վուր խալխն էսենց թայիր թային չէինք լուսաւորւած, էսենց չէինք առաչ գնացի, էսենց չէինք մարթավարացի

Չէ, էլ էն չէ աշխարքս։

Մէ մէ ջուր փիքր իմ անում, փիքր իմ անում ու ինձ ու ինձ ասում իմ—վուր մինք մէ եանդլից հուցի վրեն ինք կաղնի, թէ չէ ով է իմացի, վուր առաչ գնալու տիղ՝ յիդ յիդ գնանք։

Կիպարչխալէն, (խեցգետինը) ինչ է կիպարչխալէն. կիպարչխալի հանցի ինք հիմի մինք ու արի տես, վուր էս սահաթիս կիպարչխալէն գին ունէ ու մարթս, Աստու ստեղծած՟ էրկու վուտանի, մէ գլխանի, միթամ ուղուփով, միրուք բեխերով մարթս կի՝ գրօշի արժէք էլ չունի։

Փալչի է մաշ աշխարքս։

Հալբաթաս էսենց է, վուր էսենց ինք փոխւի։

Վա՜յ իմ գլխին, վուր ինչիր իմ տեհի ու ընչիր իմ տեհնում։

Ու վայ ձիր գլխին, վուր էլ չիք կանայ էն տեհնի, ինչ վուր կէր առաք։

Ի՞նչ կէր առաք։

Ինչ վուր սիրտդ ուզէր, ինչ վուր ուիրօ ադիդ էր մարթուս համա, ինչ վուր գուզէիր վուր ըլէր քու սրտի սիրածի համար։

Հիմի կի ինչ վուր չիս ուզում տեհնի, հէնց էն է առաջդ գալի։

Ջիմ գիդի ինչ է էլի, խելքս գլխիս չէ։

Իս իլ իմ փոխւի։

Կու փոխւէի, մաշ ինչ զահրումար կուլէի, թի վուր տասուանից մինչիւ իրիգուն մէ գլուխ էս իմ իմանում՝

Սրան սպանեցին.
Նրան փախցրին.
Սրան գողցան.
Նրան օրխոկ արին.
Փլանին բռնեցին.
Փստանին քշեցին.
Սրան չարափեցին.
Նրան կախեցին...

Վա՜յ, վա՜յ, վա՜յ, ամօթ մեզ։

Մարթը, Աստու ստեղծած մարթը, վիր է կենում ու... մէ ուրիշին, իրա հանցի մարթուն սպանում է։

Մարթը, Աստու ստեղծած աթամորթին վիր է կենում ու իրա հանցի մարթուն զուզնում է։

Մարթը, Աստու պատկերով մարթը, վիր է կենում ու իրա ձեռքը արնի, մարթուս արնի մէջ շաղղում է ու վիրջն էլ էտ մուստար ձեռները բռնեցնում է, էտ արնոտ ձեռներով հաց է ստնում դրա բերանը ու հաց է ուտում։

Ու սպանում ին, զողնում ին, փախցնում ին, ինչի խաթրու. փուղի համա։

Փո՜ղ, անումդ ըլի, ինքդ չլիս, վուր էսենց չէիր մուտասի աշխարքս։

Առաք ով էր իմացի, մարթ գողնալը.

Մարթ կի չէ՝ գանիրնիրս բաց էինք քընում, ու էն թուրքերին, լէզգերին ու փանրերին էլ, էսենց բան չէինք իմացի։

Հիմի կի զումիններով մարթիք ին զողնում, էրեխին մօր ծծիցը փախցնում։

Առաջ վուր մէ տիղ մարթ էին սպանում, էրկու իրիք սահաթում մարթասպանը աշկարայ էր ըլում, իրա վուտով գալիս էր ասում իրա միղաւորութինը։

Հիմի կի սպանում ին մարթկանց շատլաանիրը, խուլիգանիրը, արնի ծառու պրովակատուրնիրը, վիրջն էլ ասում ին, վուր սպանողը ան պարտսի մարթ է, ան պօլիցէն։

Սա անասվիստ լրփութին է։ Անդրուց համա խելօք սուտ չունքի դարդը չիս իմանայ։

Հիմի մարթիք՟ ին սպանում, օջախնիր ին քանդում ու... վայ իմ հոքուն, միթամ վունչից, արխէին արխէին հալա մաս էլ ին գալի խալխումը։

Ի՞նչ է մեզ պատահի։

Առաջ խակի չկօլի էրես չէինք տեհնում. մեր չկօլէն մեր դուքան քաղարն էր ու թէ վուր շատ չալիշ գայինք, մէկ էլ անտրանտ ու քըրօնիկոնը—հիմի, հիմի ունիվերսիտետնիրով, գէմնազիէքով, սեմինարիէքով, կուրսաններով լցրել ինք քաղաքներն ու գիւղերը ու ամութ մեզ՝ մարթասիրութին չինք ձեռք բերի։

Ջիմ ասում թէ էւրոպումը էսենց բլի

Էսոր մէ փալչիսութին կուլի, թէ չէ, ով կանաա սաի, վուր ուսումը էսենց թարս պտինք հասկանայ մինք։

Փալչի է աշխարքս հալբաթաս, թի վուր ամեն մէ չաթուրեսան, վունչ թէ սրտով է խօսում, վունչ թէ գլխով է միտքը անում—բաս լէզօրով ու խանջլով։

Փալչի է աշխարքս, հալբաթաս, թի վուր մեր փուրձիչնիրը, օրէկան հինգ թասւր ին իրենց փքրիրը փոխում. առաւոտհան տակաւր ին ըլում, զակուակի վուխար լիբերալ, ճաշին ցօցիալ, ճաշից եդը՝ իրիգնահացին ափրացու ու գէշիրը կի՝ խուլիգան։

Փալչի կուլի աշխարքս, բաս ինչ զահրումար կուլի, թի վուր Աստծուն իրին էլ մասխարա ին զցում մեր էն վարթապիտ ակրաէրնիրը, վուր անամօթավարի գնում ին խափում ին հաւատով խալխին էլ, էչմիածնին էլ, զակօն-մակօնին էլ ու սուտոց ակրաէր վարթապետ ին ըլում, չունքի միթամ աստատանիր ունին։ Ու վիրջը կի փարաջէն էսենց ին հանում, ժամիցը փախչում, վունց վուր խօյլիրից։ Համա աստատանիրը չին վուր վարթապետի ու ակրաէրի կոչում պիտին տայ.—Նամուսն ու Արուպը պիտի ըլի։

Իսի վուր էտ չկայ, քանի գրուշ ամեն գիդլօմ աստատանիրը։

Մեր էս սահաթւայ էլած մէ էրկու հատ օրինաւուր էպիսկոպոզ, վարթապիտ, ակրաէրնիրը, թէ վուր կան, ունիվերսիտետ չին էլի Արսէնի, Էզնիկի, Թադի թասւր։

Փալչի կուլի աշխարքս, բաս ինչ խօլվերս կուլի, թի վուր էլ հաւատարմութին չկայ, ախպէրը ախպուր չի կանում ասայ, քիրը ախպուրը թալնում է, վուրթին հօրը սպանում, կնիկը մարթուն խափում, վաճառականը գլխում, չինովնիկը գողութին անում, զախտուրը հիւանդին քանդում, ատուակատը կլիէնտի համա մէ տղրուկ, մէ ծուրբեկա է դառնում, վարժապետը պատիժ է ըլում աշկերտի համա։

Զէ, մարթկութին էլ չկայ մեր մէջ, մինք նամարդնիր ինք, թէ չէ մարթկութին վուր ըլէր մեղնում, մաշ մեր կու քաշէինք ձեռք մեր ախպուր վրէ՞ն։

Վա՜, զանա էնդադամ էլ չկա՞նք, վուր գէլ ու աւչի տօլ էլա նամուս չունենանք։

Գէլը վուր գէլ է, աւչն էլ աւչ ու ապրում

ին չոլերում ու մէշերում, մէկմէկուն չին տեսնում, չեն ուտում, փունց վուր մարթը մարթուն։

Մինք կի, էնդղամ ինք մուսաւորւի, վուր սալդաթներւի վրեն էլ ին ձեռ բանցըրացնում. սալդաթին էլ ին սպանում։

Էն սալդաթին վուր միր հալալ ախպէրն է, էն սալդաթին, վուր ամեն բանի մէջ անմեղ է։

Էն սալդաթին, վուր օրէօր մուլաֆ է տալի, թէ իփ պիտի տուն գնայ ու էլ գիղի, տանը փունց պատաւ դէդէն ու ծիրացած մամէն աչքը ջուր կտրած սպասում ին իրեն։

Ու վուր սպանում ին սալդաթին, ինչ ին փիքր անում։

Սալդաթին սպանուղը մարթ չի ըլի. նա պրավակատուր խուլիգան ու աննամուս օց կուլի, նա Աղէսի հանդի մառնիչ կուլի, վուր հազար անմեղներու սարարի մէջն է ննգնում։

Է՜հ, ինչ շատ խօսիմ ձիզ հիդ. խօսղին էլ լսող պիտի ու ումիկ (յոյս) ունիմ, վուր կու լսիք, չունքի, խաթարալիտնիր, ձիզ իմ տուում, անգամ դրէք, թէ ինչ էր տուում միր մինձ ուստաբաշի Սայաթ—Նովէն.

«Շատ մարթ էստունք կու խմանայ, կու է.
«Հալբաթ սա զանգին ա.»
«Ձին գիղի, թէ ուշկ ու միտկըս հազար մէ
բարաթ հանգին ա.
«Մարիփաթով բանցը լիզուն դիփունի
վրայ անցին ա.
«Սայաթ—Նովէն էնդուր կու լայ՝ գլուխըն մահու ճանգին ա,
«Աստուած սիրօղն ինձ ազատէ՝ խարամանաթ չըքաշէ»։

Գասպար Կալատուզեանց

## ԱՐՑՈՒՆՔԻ ԱՄՊՈՑԸ

Սեւ ժայռի տակին, ամպոցի դիմաց
Կանայք հերարձակ արցունք են թափում.
Պարիսպների մէջ, ծաղիկներ թօշնած,
Նոյնպէս արցունքով ժայռը ողողում։

Դարերով է այս պատկերը ապրում,
Դարերով ժայռն ու ամպոցը դաժան,
Արցունք են խմում, արցունք են քամում
Ու դիմանում են մուր, անսասան։

Հեքիաթ է կամքի, թէ մի կատակ է.
Բայց արցունքները դարերով թափած,
Թէ ժայռ, թէ ամպոց հիմն ի յատակէ
Մի օր կը քանդեն, հողին հաւասարած։

## ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Փետրուարի 23-ին

Վաղուցէն նամակ գրած չէի ձեզ։ Պատճառն ան էր, մազ մնաց գիս նախարար ընտրէին և եթէ այսօր ես նախարար մը չեմ, այլ սակ ձեր թղթակիցը, թիւրիմացութիւնն է... բաղդի կողմէն։

Հոս նախարար ըլլալու համար շատ բան չի պահանջուիր. բաւական է, եթէ օրական քանի մը անգամ, այս ու այն դաշինքն մըտնէք, ամեն տեղ «Միութիւն և Ազատութիւն» քոմիթէին գովքը ընէք, տասն անգամ մը ալ Ահմէդ-Րիզային անունը տաք և տալու պէս «կեցցէ» կոչէք. Քանի մը օրէն, ազ մասին կը հաղորդուի ուր հարկն է ու կոկսին հետեւիլ ձեզի և եթէ ձեր դիւրին մէջը հաւատարիմ էք, եթէ միամտաբար ընդհանուր հայրենիքի մասին կը խօսիք և հայն ու յոյնը, արաբն ու հրէան, սերբիացին ու մակեդոնացին հրապարակօրէն քարկոծելու խելքն ունեցած էք, ապահովաբար զձեզ կը տանէք նահանգապետութեան, կամ առոր նման պաշտօնի մը։ Իսկ եթէ վարչապետ Քեամիլ փաշան քննադատէք, անոր հասցէին կարգ մը անկարգ բաներ ըսէք ու աղ բոլորը երիտասարդ թուրքերուն աչքերուն առաջ, բաղադին մէջը, տասնց այլևայլութեան նախարարաց ցանկին մէջ կը մանէք։

Ան ալ պիտի ըսեմ, որ ցանկին մէջ մտնալ, տակաւին չի նշանակեր նախարար ըլլալ. ոչ։ Ցանկի մը մէջ մտնալ, կը նշանակէ թեկնածու ըլլալ և ինչպէս անգամ մը աչքերովս տեսայ, նախարարաց ցանկին մէջ 687 անուն կար, ու այդ ցանկին մէջ էին մեզուցած գիս—իմ անունս ալ գրանցուած։

Սա հարցիս, թէ մինչև 687 հոգիս ալ կրնա՞նք նախարար ըլլալ, պատասխանեցին.

—Ինչու չէ, այնքան կախուած է ձեր տոկոսին դառնալու աստիճանէն, որչափ աւելի տոկոսան, այնչափ աւելի երիտասարդ թուրք կլլաք,—որչափ աւելի երիտասարդ թուրք՝ այնչափ աւելի կը մօտենաք նախարարութեան։

Եւ եթէ ես այսօր նախարար մը չեմ, առոր պատճառն ան է, որ 687 հոգով նախարարութեան կազմելը քիչ մը դժար է... դրամի պակասութեան պատճառով։

Է՜հ, քանի որ նախարար չենք դարձեր, թողունք ազգային և մեր ազգային գործերէն խօսինք։

Ազգին էն ամենէն յուզիչ հարցը, այժմ Արշարունի սրբազանին պատրիարքական փոխանորդ ընտրուելն է։

Բան մը, որ ամենէն քիչ ինք կը սպասէր և որը, բէւորկութեան հետևանքն իմացեր է, կրակն խեղճը լացեր է։

«Ըսէք-կարդացեմ, ինչու գիս քոռ ու փուչ ընելու կաշխատիք», ըսեր է սրբազանն իր ընտրողներուն։

Եւ իրօք, այժմ պատրիարքական տեղապահ ըլլալ, միևնոյն է թէ անէ մը յետոյ, անձին անընդունակութեան, անպէտքութեան վկայական ուզել է։

Ինչ գա Դուրեան սրբազան։

Մարդը, որ տասնեակ տարիներ բանտարկութեան սովոր էր, տասնեկ բանտարկութիւն մը, երբեք չէր երազեր։

Եւ իրօք, ինչու պատրիարքական տեղապահ ըլլալ, երբ ինքը, երկաթէ պատրիարքն ու ամենայն հայոց կաթողիկոսը, մազ մնաց ծեծով ձեռնադրէ... խումա և կողմէն։

Ըսէք խնդրեմ, որ բանտատեղը կը ցանկանայ բանտարկութեան այս բարձր աստիճանին հասնիլ։

Կըսեն թէ Դուրեան սրբազան, այժմ ողբերգ մը կը շարադրէ... ձօնուած Յովհաննէս սրբազանին, իսկ Յովհաննէս սրբազան, պատրիարքարանը ռազմական դրութեան մէջ դնելու համար, դիմում ըրած է Պրուսիոյի պատերազմական նախարարութեան և Ֆոն-Դօլց փաշային և այժմ կարգ մը ռազմագէտներ կը պատրաստեն պատրիարքարանին ռազմական վերաշինութեան յատակագիծը.—այն դէպքին համար, եթէ նորէն յարձակում մը տեղի ունենայ, բան մը, որ շատ հաւանական է, աչքի առաջ ունենալով ժողովրդեան ժամանակակից տրամադրութիւնը և սովին սաստկանալը։

Երբ բարդութիւններ առաջանալու ըլլան, անմիջապէս կը հաղորդեմ ձեզի։ Անգամ մը, որ ալ ուրիշ գործ չունիմ և պատրիարքարանին բարապան ըլլալու յոյս ունիմ։

Եթէ նախարար ըլլալս չյաջողեցաւ, բարապան ըլլալս յուսամ կասկածէ դուրս է։

ՆԵՄՕ ԷՇԽԱՆԴԻ

## ՁՄԵՌ

Լեռ ու ձորեր ծածկել էին
Ձիւնափաթիլ պաղ սաւան.
Ճուրջը ցուրտ էր, սառնամանիք,
Մեգ ու մշուշ անսահման...

Դեռ ափին սօսն ու ուռին
Կ'երկնէին մենացած.
Լայնկան ճամփին՝ երանց յոյնի՝
Երգեր կ'ասէր մեղմաձայն...

Դալարազուրկ, մերկ սաւերում
Մէջ կ'շրէր դարդ ու սուգ.
Սառցի շանթին սգուր առում
Լուռ կ'քամէր արտասուք...

Մի՛ լար, առո՛ւ, կ'գայ գարուն՝
Հեռը դիւրին, նոր զեփիւռ
Ցոլ փարէյով՝ դուռ բրարուն
Կ'տայ կարօտ, ջերմ համբոյր...

Ծաիղ



## «ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ»

Քաղաքացիներ, մեր ներողութիւն, ես սխալւեցի և ձեզ «քաղաքացիներ» կոչեցի։ Ճշմարիտ է, որանից առաջ մի ամիս առաջ, Տագանրոգի քաղաքագլուխը յայտարարել էր Մեսինայի աղէտի առիթով Տագանրոգի բարեգործական ընկերութեան վարչութեան, որ ինքն արգելում է «граждан»-քաղաքացիներ բառի գործածելը, առարկելով, որ միզանում օրէնքով կան Ռուսաստանի բնակիչներ (обыватели) և ոչ թէ քաղաքացիներ, սակայն առանց այդ առարկութեան թոյլատրութեան ակներև է, որ, «քաղաքացիներ» բառի գործածութիւնը, և այդպիսի կոչումով հասարակութեան դիմումը, ներկայ պարագաներում և ներկայ հասկացողութեամբ, աւելի քան թէ անտեղի է։

Ո՞ւր է քաղաքացիութիւնը։

Նա ամաչում է երևալ մեր իրականութեան մէջ և թաքնւում է ամօթից՝ մեր պատճառով։

—Եւ ինչի՞, ինչ պատճառով

Կամ թէ ինչով մենք քաղաքացիներ չենք։

—Շատ պատճառներով... որովհետև մենք քաղաքացիներ չենք։

Քաղաքացին, երբէք չի արհամարհել այն առաւելութիւնները, որոնք յաւիտենականապէս ընդունւած են որպէս ֆակտորներ մարդկութեան երջանկութեան համար։

Իսկ մենք, մենք արհամարհում ենք այդ ամենը։

Մի՞թէ այդպէս չէ. չէ՞ թէ այդպէս չլինէր, ապա էլ ո՞ւր է ազնւութիւնը, որին գտնելու համար, Շէքսպիրի Հօրացիոն էլ որ հրաւիրենք, զուր պիտի անցնի։

Ազնւութիւնը, որի անունով տակաւին երդւում ենք, որով հրճւում ենք, որով հիանում, այնպէս ենք նրան վարկաբեկել, որ ոչ մի միջոցով ներկայ հասկացողութեամբ, չենք կարող վարկը վերականգնել։

Եւ դա իրականութիւն է։

Փորձեցէք մինի մասին ասել, որ նա ազնիւ է և բոլոր հեգնանքը կը լինի նրա պատասխանը։

Ո՞ւր է հաւատարմութիւնը։

Նա թևեր է առել և եթերի մէջ է սլանում, նա մեզ մօտ տեղ չի կարող գտնել, որովհետև «հաւատարիմ» այս բառէս, միայն շահն են առում և մեր քաղաքացիները շահերից զանազանելու համար, մարդկային կատարեալ իրաւունքով, չեն համաձայնում «հաւատարիմ» յորջորջելու։

Ո՞ւր է մեր հայրենասիրութիւնը։

Կար ժամանակ, երբ մեզանից իւրաքանչիւրս մեծ պատիւ էինք համարում կոչւել ազգասէր. ներկայիս դա ամօթ է, որովհետև կարծւում ենք, թէ ազգասիրութիւնը քարոզում է այլազգիներին ատել և մենք ակամայ մեզանից ներկայացնելով «կօսմօպոլիտ» ոչ սիրամարգին ենք նմանւում, և ոչ ագռաւին համակերպւում ենք։

Ո՞ւր է ճշմարտութիւնը։

Դուք մի հարցնէք դրա մասին։

Գոյութիւն ունեցող ներկայ սովորութիւնների համաձայն, արդարադատութիւնը էքսպրօպրիացիայի է ենթարկել և... կախաղանն են բարձրացրել. ստուի այդ մասին ծպտուն հանելն իսկ, վտանգ է սպառնում։

Այս պարագաների մէջ ու այսպիսի հասկացողութեամբ, տասցէք խնդրեմ, իրաւունք չունէ՞ր Տագանրոգի քաղաքագլուխը արգելելու Ռուսաստանի բնակիչներին «քաղաքացիներ» կոչւելու.

Այո՛ ունէր.

Որովհետև երբ մենք այսպիսի բարքերի տէր ենք, հազիւ թէ արժանի լինինք «քաղաքացիներ» կոչւելու։

Քաղաքացիները աւելի մեծ մարդիկ, աւելի մեծ ժողովուրդներ են։

Մենք դեռ...

Բայց այդ մասին մի այլ անգամ, բառ ս. Քալանթարի։

Ս. Պապիկեան.



ԱՌԱՔԵԼ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ (բանտում)

## ԻՇԽԱՆ ԱՄԻԼԱԽՈՐԻ

—

Իշխան Ամիլախորին Բաքւում գեներալ նահանգապետ եղած ժամանակ, կարդում են, թէ „Կալիֆօռնիայում տ ե ղ ա ց ի ն ե ր ը" ապստամբել են իշխանութեան դէմ.

—Բոլորովին սուտ է, բացականչում է բարեհոգի իշխանը, ես այսուհետև, Պետերբուրգի հեռագրական գործակալութեան հաղորդած լուրերին, ամենևին չեմ հաւատալու. ես երեխայութիւնից սովորել եմ, որ Կալիֆօռնիան Ամերիկայում է գտնւում., իսկ այնտեղ հայեր—տեղացիներ չկան։

## ՄԻ ԼՂԱՐ ԿՆՈՒՆՔ

Հայր մե՛ր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո... տիրացու ինչ ես գնջրտում... եկեսցէ արքայութիւն քո... կնքահայրը ծռաեղ է, կնքահայրը ծռաեղ է... եղիցի կամք քո... դու ես կնքահայրը, Գէորգ ջան... որպէս երկնի և երկրի... երկումով առ որդի, մէկը ինձ համար, մէկը տիրացուիս համար... գնաց մեր... Է... էս բարակ է որդի, էս բարակ է որդի... հանապազորդ տուր մեզ այսօր... վա՛, վա՛, էս ինչ զալմաղալ է, օրհորդներ, սուս կացէք... թող մեզ զպարտիս մեր... դու քանի խօսես տօ, ծ՛վ ես... որպէս և մենք... Արշալոյս ես, Մարշալոյս ես, խնլօք կաց... թողունք մերոց պարտապանաց և մի տանիր զմեզ ի փորձութիւն... այժմ և միշտ...

Հրաժարիմք ի սատանայէ... ամօթ է, որդիք, թարս կանգնեցէք...

—Սաթենիկ, Սաթենիկ, տիրացուն ինչ սիմպատիչնի է...

—Ի՞նչ ես ծիծաղում քա, ամօթ է...

—Օրհորդներ ինչ կը խնդաք, ամօթ չէ՞, թէ՞ կուզէք ինձի հետ մէկզ պսակւէք. կուզէք ծանօթանանք... փամիլիա բանի, Շախուլենց Արշալոյս. ինչի կը փախնիք...

—Վայ քոռանամ, տխչի դուս գնանք...

—Առաքելո՛յ մղաւնոյ, իջանելոյ... երեխայս գի՞նչ խնդրէ. կնքահայր քեզ հետ եմ, ինչ ես բերանդ բաց օրհորդներին թամաշա անում... օրհորդներ դ՛ուս կորէք... մղդսի, դուս արա ինչ ես կաղնել...

—Հաւա՜տ...

—Հաւա՜տ...

—Ցո՛յս... կնքահայր, կրկնիր Է...

—Ախար տէր հայր, էս լոպոտծներում երեխայից ինչ հաւատ պահանջենք...

—Անունն ինչ, երեխային ինչ անուն դնենք... Կարապե՞տ... լաւ անուն է, իմ բիձաշս անունն էլ Կարապետ է... և բդծատայն քո Կարապետ պահեա և պահպանեսծ... Հայր մե՛ր, սուրբ եղիցի անուն քո, այժմ և միշտ և յաւիտեանս... Կնքահայր, արի խորան... արա փողը... քիչ է, որդի... հա... ոյ չեն կենաա... տիրացու գնանք։

Օշխար

## ՍԽԱԼՄՈՒՆՔ

—

Պարսից Թալանեիջան քաղաքում ապրում էր նահանգապետը։ Իսկական պարսկական նահանգապետ։

Եւ կառավարում էր անտանման իրաւունքներով։

Բայց պարսիկները կոպիտ են և նախանձոտ։

—Ինչով է ապրում մեր նահանգապետը, հարցնում էր մէկը միւսին։

—Անտանման իրաւունքներով ու թթւեցնում էին դէմքերը կնճռոտելով։

Կնճռոտում էին որովհետև էլ, իրենց պարսկական լայն շալւարների գրպանների բերաններն էր։

Մի անգամ այնպէս պատահեց, որ տասնից խօսք մէկ անելով, բոլորն էլ գրպանները բռնած՝ իրանց պարսկական բարբառով աղաղակեցին.

—Ղարամո՛վ, թալանում են.

Այդ ժամանակ ժողովրդի ամբոխացած ավկեանի միջից, դուրս լողաց մի մարդամ,

պստիկ, աննշան, փոշոտ մի ծառայող: Նա աղքատ էր, ամսականը մէկ գրւանքայ ատհաթ-լօխումի գին չէր. լինի: Խիղճը չէր թոյլ տալիս գողութիւն անելու, ինչպէս այդ սովորական է փոշոտ մանր ծառայողներին: Եւ ապրում էր խեղճը քաղցած, անկատ, թալանւած:

—Ալլահ քերիմ գըր.—Այդպէս չի կարելի մշտապէս մնալ, ասում է:

Ցաղի փիւսկիւլը թափ տւեց, ամբոխի միջից դուրս թռաւ, ռումբը գցեց թալանիչների փողոցներում գրաւող Նահանգապետի վրայ:

Աստուած պատժում է արիւնկզակներին:

Ռումբը թռցրեց չարամիտ յանցաւորի աջ ձեռքը:

Աստուած ուղարկում է փորձութիւններ:

Նահանգապետի էլ աջ ձեռքը թռցրել էր ռումբը:

Վրազլխու սուրւագները վերցրին Նահանգապետին էլ, ձեռքն էլ տարան տուն:

Չարագործին էլ վերցրին, նոյնպէս թռցրած ձեռքն ու տարան հիւանդանոց:

Պարսից միրարունները եւրոպացիների թայը չեն:

—Այդ ձեռք կարելը, ասում են, դատարկ բան է: Կարելի է այնպէս կարել, որ չորանայ, կպնի. իսկականից էլ լաւ լինի:

Ու կարեցին, ձեռքն առողջացաւ:

Յանցագործին դատում են. թէպէտ Պարսկաստանում սահմանադրութիւն է, բայց չգիտեմ ինչ պատճառով նրան դատարանի չզրին, այլ դատապարտեցին միայն տաժանակիր աշխատանքի:

Միայն նահանգապետը վերջին օրին հանեց վերուց յանցաւորին ներողութեան վճիռ ստորագրեց:

Եւ բոլորը նկատեցին, որ պարսիկ նահանգապետին մի տարօրինակ բան է եղել: Նա չափից դուրս հեզ ու խոնարհ էր դառել: Եւ ստորագրութիւններն էլ, միայն արդարացնող դատավճիռներ էին:

Եւ ամենից զարմանալին այն էր, որ նա այլեւս չէր օգտւում «անսահման իրաւունքներով»: Դրա շնորհիւ, ժողովրդի թէ արքունի ֆինանսները, որ վերջնականապէս չքանալու վրայ էին, յանկարծ սկսեցին շատանալ,—սնդուկները լցւեցին ու ժողովուրդը դարձաւ բարեկեցիկ:

Բայց յանկարծ մի անհասանելի դէպք պատահեց:

Արդարացած պաշտօնեան, որ նահանգապետի օգնութեամբ նորից ծառայութեան էր ընդունւած, ամենաանպատկառ գողութեան մէջ բռնւեց:

—Դու այդ ինչեր ես անում, եղբայր. առաջ ռումբեր էիր ձգում, հիմայ օգտւում ես անսահման իրաւունքներով:

—Ես էլ չեմ հասկանում, Ձերդ գերազանցութիւն, չէյթանը մոլորեցրեց:

Ցուցմունքն առան:

—Ստորագրիր, ասում է պարսիկ նահանգապետը:

—Մեծաւ բաւականութեամբ:

Նահանգապետն ստորագրութեանը նայեց և զարմացաւ:

—Ի՞նչ յիմարութիւններ ես գրել, փոխանակ ազգանունդ, «բռնել ու կախել»:

—Միթէ. ով զարմանալի բան: Ռումբից յետոյ, Ձերդ գերազանցութիւն, այս անտէր ձեռքն էլ կարծես իմը չէ: Ուզում եմ մի բան գրել, ուրիշ բան է դուրս գալիս, կուզես թաշկինակի համար քո գրպանը տանել, ուրիշի գրպանն է մտնում:

Նահանգապետն ուշադրութեամբ զննեց նրա ձեռքն ու հառաչեց:

—Այն անպիտաններն իմ ձեռքն են քեզ կարել: Նայիր մատի վրայի սպին, որ ես

# ՖԵԼԻԵՏՕՆ

## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ

### ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

I

—Եթէ մի օր և է Լէվինգստօն կարողացել է Աֆրիկայում ճանապարհորդել և իր ճանապարհորդութիւնն, իւր աշխարհի հրատարակել, եթէ մի օր և է Կօլումբոս կամ Ամերիկոս Վեսպուչչէ կարողացել են անծանօթ Ատլանդեանն ակօսել, ինչու ես էլ նոյնը չանեմ մեր այս ազատ, երջանիկ երկրում,—մի առաւօտ այդ խօսքերն ուղղեցի հօրս, որ երեսը նոր լուացել, թէյի էր պատրաստւում:

Հայրս, կարծես կայծակի հարւած ստացած՝ մնաց երեսիս նայելիս. կարծելով որ միտքս չի հասկացել, նորից կրկնեցի:

—Դու հիւանդ ես. գնա բժկի մօտ.—պատասխանեց հայրս ու երեսը շուռ տւեց:

—Ոչ, ես հիւանդ չեմ, և պէտք է ճանապարհորդեմ.-պնդեցի ես:

Բայց հայրս ոչինչ լսել չէր ուզում. նա օրինակ բերաւ Մուսա-Նաղիեւին, Արսենեանցին, Ալիւազովին, Սերգէեւին, Ռաթումի յոյն բժկին. և այլն, և այլն... ոչինչ, պինդ էի կանգնած: Եւ երբ հայրս տեսաւ, որ այլ ես ինձ յետ կասեցնել չի կարող, կարմրած, վզի երակները ցցած՝ կանչեց:

—Եթէ այդպէս է, ես քո հայրդ չեմ:

—Ես էլ քո որդին չեմ...

—Ա՛, այդպէ՞ս, ես քո հայրդ չեմ... դու ուրանում ես քո հօրդ... թող ուրեմն Պուրիշկեւիչը յօշոտէ քո սիրտդ, թող Մէնշիկովի գրիչը խօսէ քո մասին, հայր Իլլիօդորի քարոզներին արժանանաս, և թող „Новое Время"-ն ու „Русск. Знамя."-ն լինի քո ընթերցանութեան նիւթը... գնա, էլ աչքիս չերևաս:

Եւ հօրս այդ սարսափելի անէծքի տակ ծանրացած՝ գնւեցի ճանապարհորդին անհրաժեշտ բոլոր զէնքերով, մնաք բարով ասեցի ծանօթներիս ու տնից դուրս եկայ:

II

Սկիզբը յաջող էր. վագօնում դէմուդէմ եկաւ խօզամազ մէկն ու շեշտակի հայեացքով չափեց ինձ ոտքից մինչև գլուխ, իր բոլոր իրեղէններն իմ չորս կողմն դարսեց, իրա շուրջն ազատ թողնելով, ապա հանեց մի պապիրոս, ծուխն առատօրէն բաց թողեց երեսիս ու քիթը փնչացրեց. հասկացայ, որ նա ինձ հարցնում էր, թէ՝ ճանաչո՞ւմ եմ իրեն:

—Այո, պարոն,-ասացի նրան.-ճանաչում եմ. կարծեմ ձեզ տեսել եմ գազանանոցում:

—Սխալւում էք,-պատասխանեց նա.-ես միայն Կրուշեւանի ընթերցողներից եմ և Պուրիշկեւիչի ջերմեռանդ ունկնդիրը. իսկ եթէ չէք հաւատում, ահա վկայականս:

Եւ սա վերարկուի տակից հանեց Օդեսայի գործարաններում պատրաստւող նետիններից մի կտոր, մի արշին երկարութեամբ, որի վրայ երևում էր «1-й сортъ» դրօշմը: Ես ակնածութեամբ գլուխս խոնարհեցի, և մինչդեռ նա պատրաստւում էր Տէրէնտիեւից առաջած ատեստատը ես հանելու, արագութեամբ դուրս թռայ միւս կուպէն, և ազատ շունչ քաշելով նոր տեղ գրաւեցի ինձ համար:

Երբ ես շտապով ներս ընկայ կուպէն, այդտեղ նստած մի պարոն վախեցած նայեց ինձ և ծոցի տետրակը, որտեղ նկատողութիւններ էր գրում, խիստ զգուշութեամբ սահեցրեց նստարանի տակը, ապա քաջացած՝ ակնոցներն ուղղեց:

—Կարծեմ ձեր տետրակն է.-նկատեցի նոր հարևանիս:

Ոչ ոք. պարոն, ձեզ իրաւունք չի տւել ինձ վիրաւորելու, գրպարտելու.-տաքացաւ հարևանս.-երևի հէնց ձեր տետրակն է և ուզում էք ինձ դժբաղդութեան մէջ գցել:

Եւ երբ բաւական խօսելուց յետոյ նա իմացաւ, որ ես մի հասարակ ճանապարհորդ եմ միայն ու դուրս եմ եկել ազատ երկրի զանազան կողմերն ուսումնասիրելու, նա նոր միայն ծոցի տետրակը հանեց նստարանի տակից ու ժպտաց:

—Ի՞նչ անեմ.-ասաց նա,-ես գրող եմ և գրելու համար շատ էլ տուժել եմ. իսկ այս տետրակում, ձեր մտած միջոցին՝ ես արդէն գրել վերջացրել էի, որ ես մի շատ գեղեցիկ նշանած ունեմ, որին շատ սիրում եմ. իսկ այդ, գիտէք... մասամբ... շատ վտանգաւոր է. Պօլօվցեւը կարող էր իմանալ, և... չէ՞ որ նա միայն 70 տարեկան պառաւներից է խորշում. իսկ ջահելներին...

Մարդն իրաւունք ունէր ծածուկը թագցնելու. ես նրան կատարելապէս հասկացայ, և ներեցի՝ ինձ գրպարտիչ անւանելու համար:

Երևում էր, որ ճանապարհորդութիւնս հետաքրքիր և տպաւորութիւններով բազմակողմանի են լինելու, և ձեռներս գոհունակութեամբ շփելով՝ պայուսակս վերցրի, որովհետև գնացքն արդէն փնչալով մօտենում էր այն կայարանին, որտեղ պէտք է իջնէի:

Կը շարունակւի

Մասաղօր

երեխայութիւնից ունէի։ Իսկ ինձ էլ քո ձեռքդ են կարել, ուրեմն ինչ պիտի անենք հիմայ։

—Կամենաք, ձերդ գերազանցութիւն, նորից մի բամբ ձգեմ և հէնց այդ ժամանակն էլ երկուսով միասին ձեռքներս երկարացնենք։

Պարսիկ նահանգապետը խոր մտածմունքի մէջ ընկաւ։

—Չէ, չի, գլուխ գալ։ Վայ թէ ձեռքերի տեղ գլխներս թռցնէ։ Ինձ համար ոչինչ, իմ տեղն ուրիշ գլխներ կաշխատեն, իսկ դու քաղցից կը մեռնես։

Էլի երկար մտածեցին։

—Մէկ բան է մնացել... կը փոխադրեմ քեզ փոշտի ծառայութիւնից, պարսկական ծովային նախարարութեան մէջ։

Փաշտօնեայի մասյլ դէմքը պայծառացաւ։

—Իսկ այնտեղ անպատիժ...

—Այո։

Եւ երբ այդպէս արին, բոլորը զարմացան բարի նահանգապետի իմաստութեան։

—Մեծ է Ալլահը, ասին խօսք։

„Сатирик."

## ԳԱՏԻԿ ԼՈՒՐԵՐ

—Մի քիչ առաջ Եզէֆին տեսայ.

—Ինչպէս ճանաչեցիր. թէ Ազէֆն է։

—Վա՜յ։ Համոզիկ։ կոխ ընկած շրթունքով ու Մենշիկովի հետ էլ թեւանցուկ գընում էր։

## Հ Ր Է Շ

Երեք տարեկան աղջիկը. մօր արդուզարդի սեղանի վերայ տեսնելով, արհեստական ծնօտներ, փախցած վազում է հիւրասենեակը.

—Մայրիկ, սեղանից վերայ մարդ է պառկել. ոչ աչք ունի, ոչ ունք, ոչ փոր,—միմիայն ատամներն են։

—

—Աղա, գնեցէք այս տանակը, շատ լաւն է. իսկական անգլիական ադնաւդրած սերնդից է։

—Ինչն է անգլիական սերնդից, մեր սովորական տանակներից է։

—Չէ, աղա, համեցէք փորձէք, ոչ մի խօսք հայերէն չգիտէ։

## ՔԱՄԻԼԻՈՆ-ՅՕԲԵԼԵԱՐԸ

Ոչ մի յոբելեանի առթիւ, ես իբրև ժուռնալիստ, այնքան չեմ կարմրել, որքան այն «փառաւոր» յոբելեանին, որ կատարեց մի շաբաթ առաջ Պետերբուրգում։

Տօնում էին Սուվորինին—ամենատաղանդաւոր ժուռնալիստին և

Ամենահարուստ ժուռնալիստին, այնքան հարուստ, որ նրան նախանձում են տասնեակ Տիտ-Տիտիչներ, Սպիրիդոն Տիմօֆէյեւիչներ—այսինքն այնպիսի մարդիկ, որոնց բազմաթիւ սիրուհիները, շամպանեայի վաննայ են ընդունում, իսկ որդիները բէֆի համար փշրում են հիւրանոցներում 10 հազար րուբ. արժեցող հայելիներ և անպատկառօրէն ատում։

—А намъ все это наплевать! мы заплотимъ…

Այդքան հարուստ էր ժուռնալիստ Սուվորինը և...

Այդքան անպատկառ

Աւելին կասենք՝ այնքան անպատկառ էր տաղանդաւոր ժուռնալիստը, որ դարձաւ այդքան հարուստ...

—

Սուվորինի անուան հետ կապուած է «Новое-Время» իսկ «Новое-Время-ի» հետ կապուած են այնքան յանցանքներ, որ ամեն մի փորը ի շառ է բարեխիղճ գրող, սարսում է և կարմրում...

Այդ յանցանքների երկար շարքի մէջ, յիշենք միայն մէկը

—Մենշիկովին-անպատկառ չկօլայի մի այլ ամենատաղանդաւոր ժուռնալիստի...

Իսկ Բուրենինը, իսկ Դօրբինինը. իսկ Ստօլիպինը—ժուռնալիստ Ստօլիպինը։

Այն բոլոր ժուռնալիստները, որոնք իրենց գրիչը թաթախում են սանկութեան և զարշանքի մէջ, որպէս զի... շատ փող աստանան տաղանդաւոր և հարուստ Սուվորինից..

—Այն Սուվորինից, որ երեսուն տարի առաջ բանտ նստեց իր... մաքրութեան համար, իր... ազատամտութեան համար, բայց շուտով համոզուեց որ, եթէ մաքրութիւնը տանում է դէպի բանտ, անմաքրութիւնը.. դէպի ոսկու պալատներ։

Եւ նա ընտրեց ոսկու պալատները...

Օհ, այդ պալատները... եթէ միայն նրանք լեզու ունենային պատմելու այն բոլոր ապականութիւնները, որոնց գնով շարուել են միմեանց վրայ պղնձատի այդ աղիւսները.

Աղիւսները կը կարմրէին, իսկ դրանց տէրը—երբէք, որովհետև նա փորձով գիտէր, թէ որքան անշահաւէտ է կարմիր լինելը, նոյն իսկ բարեխիղճ լինելը և նա երդուեց անբարեխիղճ լինել և, ի պատիւ իր, անխախտ դարձաւ։

Այսօր նա ժպտում էր նորին բարձր գերազանցութեանը. երբ նախապէս գիտէր, որ նա վաղը մինիստր էր դառնալու. վաղը շանթեր էր արձակում մինիստրին՝ նախապէս իմանալով, որ երկու օրից նա ընկնելու է.

Այսօր նա հովանաւորում էր այս ուժեղին, վաղը միւսին և միշտ ուժեղներին, միշտ հարուստներին, միշտ նրանց, որոնք այնքան լաւ վարձատրել գիտեն ստուն ու կեղծիքը, որոնք այնքան հայրենասէր են. դրամով...

Եւ տաղանդը բարձրանում էր դէպի վեր, իսկ գրիչը... ընկնում վար, այնքան ընկնում, որից այն կողմը գերեզմանն էր. աւելի կասեմ, որից այն կողմը այն «փառաւոր» յոբելեանն էր, որ տօնեց նրանից մի շաբաթ առաջ...

Երբէք ժուռնալիստը այնքան չէր անպատւուած, որքան այդ օրը...

Երբէք հրապարակախօսութիւնը աւելի ծանր ապտակ չէր կերել, քան այդ տօնին, երբ ժուռնալիստին ու հրապարակախօսին շրջապատել էին հարիւրաւոր նորին բարձր գերազանցութիւններ, գերազանցութիւններ, բարձրաշուքներ, պայծառափայլութիւններ և նրանք, որոնք կարող էին պարծենալ ջարդերի ու պոգրոմների հեղինակներով...

Իսկ մտածող, զգացող, ազնիւ, անկաշառ Ռուսաստանն՝ այդ օրը կարմրում էր...

Կարմրում էինք և մենք ժուռնալիստներս այդ անպատւութեան համար։

Միայն չէր կարմրում ինքը յոբելեարը։

Լ. Զեա

## ԳՐԱԴԷՏ ԱԼՓԻԱՐԸ, ՄԵՂԱՑ ԿՈՉԵԼՈՎ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է «ԱՐԵՒԵԼՔԻ» ԳԻՐԿԸ։

Սիրուն Ալփիար, մոլորեալ ուխտոր,
Լաւ էր, որ նորից փարախն յետ եկար,
Թէ չէ ընկերներդ, գառներն անմոլոր
Մէ, մէ կանչելով կմեռնային անճար։
Ազգ իմ սիրական, դու ազգ Թորգոմեան,
Քու փառքից արդեօք էլ ազգ կը հանե՞ս,
Պօլսի «Արեւելք» բերանն հոյութեան
Իրան կը կոչէ փառքի ուխտաբեր։
Լաւ է որ Պօլիս «հաստ ու դալլ չկայ»
Թէ չէ կը պատռէր ձեզ. խեղճ գառնուկներ,
Որ խմբագրական աթոռի վերայ
Կը բազմեցնէք ձեզ պէս ուխտարներ։

## ՊՈՍՏ-ԱՐԿՂ

Բ ա թ ու մ ի Ռամօյին.—Գրում էք, որ գոգներին տառագով պատում են։ Մենք այդ մարդու մասին ոչինչ չենք տպում որովհետև երեւում է կլաւ մարդ է եղել, տառագով բուտանցել է. կան մարդիկ, որ ուղղակի կէտն են պահանջում, շատերն էլ բոլոր զօղացածը իրենց են վերցնում։ Էտ դրա համար ինչ կասէք։

Բ ա ղ ո ւ Բաղկցուն. Ձեր մեղաքը ի նկատի կունենանք։

Պ օ լ ի ս Գ. Տէլօյին.—Ցաւում ենք, որ հնարաւորութիւն չունենք ուղարկելու։ Երբ որ մեր խելքի բան չէ, իսկոյն զամբիւղն ենք գցում։

Կ օ կ ա ն դ Գօղ. Մանուչարեանին.—Մենք մեզ պատժում ենք համաձայն 0000000 յօդուածի, որ ձեզ պէտք արկղում պատասխանել չենք։ Իսկ ժամանակին ձեր «հոտոտածը» չպարզեցիք, որովհետև ինչպէս դուք վկայում էք, ութ երեսից «հոտոտած» էր։ Ոսկիչ բաների մասին գրեցէք, բայց «հոտոտած» մեր գրի։

Ա լ ե ք ս ա ն դ ր ա պ օ լ. Փարչարլեան. Մեր վհատի որ չի ապրիլ ձեր գրուածը, մենք էլ շատ բան ենք գրում յետոյ, չենք տպում. Ճարտանակեցէք, յարմարները կը տպենք։

Թ ի ֆ լ ի ս. Ռուսար Օչէր-ին.—Այս բարեգործ նշանակում է այն մարդը, որ առաջ պահանջում է, յետոյ մի բանի կոպէկ վերադարձ համար տալիս։

Եւ դա բարեգործների լաւ տեսակն է. կան բարեգործներ, որոնք ստանում են և իսկի մի կոպէկ էլ չեն տալիս։

## „ԳՈՒՏՏԵՄԲԵՐԳ“

գրախանութում վաճառւում են

| | Ր. | Կ. |
|---|---|---|
| Բաֆունի Մ. Տարրաբանութիւն տեսական և գործնական, 3 հատոր | 4 | — |
| » Տարերք երկրագործութեան, տեսական և գործնական | 1 | — |
| » Մեղւաբուծութիւն | — | 75 |
| » Կաթնաբանութիւն | — | 75 |
| » Շերամաբանութիւն | — | 50 |
| Տագաւարեան Ն. Տօքտ., Տիեզերք և իր կազմութիւնը | 1 | — |
| Բէշմիշեան Ա., Նախագիտելիք բուսաբանութեան | — | 80 |
| Բլօք Մ., Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսութեան | — | 60 |
| Դարվինի Չ., Աներեւոյթ հողագործ (կարմիր ճիճու) | — | 07 |
| Տարանտինովի Ն., Բամբակի մշակութիւնը Անդրկովկասում | — | 03 |
| Մանր վարկի հաստատութիւնները | — | 05 |
| Գալէմքարեան Հ. Գ. վ., Մամագործութիւն արդի յառաջադիմութեան մէջ, 21 սեւերագիծ պատկերով | — | 25 |
| Ռուբակին Ն. Զրոյցներ բնութեան մեծ և ահեղ երեւոյթների մասին | — | 15 |
| Դը Վարինյի, Օդը և կեանքը | — | 10 |
| Ղազարեան Գ. Հողը և նրա մշակութիւնը | — | 20 |
| » Սերմ և ցանք | — | 25 |
| Արարատեան Ս. եպիսկ., Համառօտ բարոյագիտութիւն | — | 40 |
| Թուխմանեան Կ. Ս., Աստղաբանական տեսանական աշխարհ | 1 | 50 |
| Բասմաջեան Կ. Յ., Օրուան մը մէջ լուսանկարիչ ըլլալ | — | 20 |
| Բէրնշտէյն, Մագիկ և պատեր | — | 08 |
| Երեմեան Ս. Հ. Նոր կենդանաբանութիւն և մարդաբանութիւն, պատմական և նկարագրական | 1 | 50 |
| Մելիք-Շահնազարեան Կ. Կ., Վազի մշակութիւն | 1 | — |
| Զաւարեան Ս., Անասնապահութիւն և կաթնատնտեսութիւնը մեր և ուրիշ երկրներում | — | 20 |
| Սարուխանեան Ա., Գրավիգը, Ներկատու բոյսեր և դրանց ներկերը. պրակ I | — | 25 |
| Ղազարեան Գ. Անասնապահութ. և կաթնատնտ. | — | 40 |
| Բէրդան Ե., Մեղուների խնամատարութիւն, մեղւապահի օրացոյցը, 76 նկարով | 1 | — |
| Պետրոսեան Յ. Այգեպտղական օղեգործութիւն | — | 40 |
| Մելիք-Շահնազարեան Կ. Կ. Ուղեցոյց գործնական շերամապահութեան | — | 40 |
| Սահակեան Մ. Հ. Համառօտ երկրաչափութիւն | 1 | 50 |
| Բաղդանով Մ. պրոֆ. Թռչունների աշնանային տեղափոխութիւնը և բնի ու ձևի սրս | — | 05 |
| Մնձատուրեան Գ. Ընտրութիւն կաթնատուների կամ կաթնատու կովերը ճանաչելու միջ. | — | 15 |
| Գրիգորեան Զար., Ջուր, տարրական նախագիտելիք բնական գիտութեան, 11 պատկերով | — | 35 |
| Ֆօսթեր, Բնախօսութեան տարրական դասընթացք 20 նկարներով | — | 30 |
| Ճեմարան գիտելեաց, կազմած | 2 | 50 |
| Մէնէվիշեան Գ. Վ. Ե. Կենդանաբանութիւն | 1 | 60 |
| » » Բուսաբանութիւն | 1 | — |
| » » Հանքաբանութիւն | 1 | — |
| Պոտեխին, Մեղւաբուծութեան ձեռնարկ 108 պատ. | — | 75 |
| Կլէյն, Գործնական կաթնատնտեսութիւն, թարգմ. Ա. Մխիթարեանի, 48 նկարներով | — | 50 |
| Լունկևիչ, Երկնքի և երկրի մասին | — | 10 |
| » Երկրաշարժ և հրաբխային լեռներ | — | 15 |

Դիմել՝ Тифлисъ. Г. И. Галстяну, книжный магазинъ „Гуттенбергъ“


Юморо-сатирическій журналъ
„ХАТАБАЛА“
Печатается исключительно на бумагѣ
Товорищества
П. В. СЕРГѢЕВА
Складъ бумагъ въ Тифлисѣ находящейся на Дворцовой ул. въ домѣ Сараджева во дворѣ.
Цѣны бумагъ Фабричныя





ԱԼՄԵՋԱ

ՉԸ ԼՍՒԱԾ ՄԻՋՈՑ ԱՏԱՄՆԱՑԱՒԻ ԴԷՄ.

Ալ. երկու րոպէում հանգստացնում է ատամնացաւը։
Ալ. բուժում է լնդերքի հիւանդութիւնները և կանգնեցնում է արիւնը։
Ալ. պնդացնում է լնդերքն ու ատամները։
Ալ. բուժելուց յետոյ ատամները չեն ցաւում։
Ալ. ու միշտ ոչնչացնում է բերնի հոտը։
Ալ. անհրաժեշտ միջոց է ամեն մի ընտանիքում։
Ալ. ահրաժ. միջոց է ճանապարհորդ. ժամանակ։
Ալ. բազմաթիւ շնորհակալական նամակներ։
Ալ. բազմաթիւ ընծաներ ցուցահանդէսներում։
Ալ. գրասենեակում այս միջոցով բժշկում ենք ձրի, որովհետև բոլորին համոզ. նրա բուժիչ լինելուն։
Ալ. բացառապէս վաճառւում Ախորաձէի պահեստում, Թիֆլիս։
Ալ. խնդրում ենք չշփոթել ատամի ուրիշ դեղ. հետ։
Ալ. կարելի է ստանալ գլխաւոր պահեստից։

Тифлисъ, Пушкинская ул. № 15.

Փորձն. սր. գինն է 40 կ., Նորմալ սրուակը 1 ր. 20.
Ներկայացուցիչ ամբողջ Կովկասի և Անդրկասպեան երկրի՝ Ի. Գ. Ախորաձէ.

Թոյլատրւ. մայրաք. բժ. վարչ. վկ. № 347.



ПОЧЕРКИ

Самые неправильные и скверные исправляю ЗАОЧНО каждому въ 1 урокомъ. На бѣглые конторскіе и изящно красивые. Пробное письмо шрифтовъ, объявл. почерковъ и условія высылаются за 8 семи-коп. марокъ. Обращайтесь по адресу: по профессору каллиграфіи А. Коссодо, Дерибасовская домъ АРМАНА ОДЕССА



ОПЫТНЫЙ
бухгалтеръ
ищетъ подходящее занятіе
въ Тифлисѣ
Адресъ Редакція „Хатабала.



№ 4711 ՃԱՐՊՈՏ ՑՊԱՐ

жирная пудра

սպիտակ, վարդագոյն և դեղին.
Պատրաստւած է ամենանուրբ նիւթերից, որոնք կաշու համար վնասակար չեն, և մարթին կակղացնում ու քնքշացնում են,

ՖԵՐԴ. ՄԻՒԼՀԷՆՍ

Քէօլն Ռայնի վրայ և Րիգա,
Նորին Կայսերական Մեծութեան դատն մատակարար

Ферд Мюльгенсъ

Кельнъ н.|Рейнъ. отд. въ Ригѣ




Ընդունում ենք յայտարարութիւններ բոլոր լեզուներով.



# ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ

ZONOPHONE TRADE-MARK

# ԳՐԱՄՄԱՖՕՆ

# Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԱՄԵՆԱՆՈՐ ԿՐԿՆԱԵՐԵՍ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԳԵՐ

„Զ Օ Ն Օ Ֆ Օ Ն“

ՀԱՅԵՐԷՆ, ՎՐԱՑԵՐԷՆ և ԹՈՒՐՔԵՐԷՆ

ԳՆԵՐԸ { փոքրը 75 կ.
{ «գրանդը» 1 ր. 50 կ.

101006. Հօրեղբօր պատմածը, դերասան Աւետեան։
64060. Ջան մարալ ջան, ժողովրդ. երգ. տիկ. Աննա և Վասակ։
102224. Ուրիշի հաշւով, Փիրումեան։
62274. Անիի ողբը, Շահլամեան։
102225. Սիրահարի խաչկինակը, Փիրումեան։
62275. Ախ,իմ Հայաստան, տղամ. ձայն
102226. Անպիտան, կատ. Փիրումեան
62276. Ձմեռ, Շահլամեան։
104675. Հոյ, Նազանըմ. ժողովրդական երգ. կատար. Ներս. դպ. խ.
108059. Աստուծ լուսոյ, ձայնիւ գառ-նայով տրիօ։
2—102992. Գրիշագիա, Փիրումեան։
108058. შანაზი, ზურნით.
2—102990. Անմոլթ Նուատուի տիկ. Աննա և Վասակ։
2—102991. Մօզա է, քա, Փիրումեան։

102229. სულიკო, გოგო აკკ. საზანდარი.
104504. შენ ხარ ვენახი, სასულიერო საგალობელი, მუს. მღ. კარბელაშვილისა, ხორო ცამციევისა.
102227. ჰარიალალე, გოგო აკკ. საზანდარი.
103040. აზ სულო-სულო, ბარბარე.
108016. კინტოური, დუდუკი, ზურნა.
108017. შალახო, დუდუკი, ზურნა.
2—102993. ორთავ თვალის სინათლევ, გოგო აკკ. საზანდარი.
104677. მრავალ-ჟამიერ, ხორო ცამციევისა.
2—102995. ოდელია, კარგარეთელი.
104676. ქართული მარში, ხორო ცამციევისა.
2—102994. თავო ჩემო, ბედი არ გიწერია, კარგარეთელი.
63414. ბაქო ქალაქი, ადგილობრივი კილო სიტყვები რუსული, ქალის ხმა.

102228. تصنيف گيلانى
63119. ماهنى قرازاق دخله ج واروارا
109264. هنگى جناب نرسيس قارقانوف شلاخو ولزگى
63120. ماهنى آى ادغ آ داغلار ج آنا
2—02996. رهاب جناب محمد خليل اوف
2—102997. سه گاه جناب محمد خليل اوف
2—102998. تصنيف كيلال
63416. وجار بياتى كيشى سسى
109348. چارگاه ج آوانس كمانچه
109347. مقامنت شرقى عورغانوف تارايله
63415. كيشى سسى ساز چالىماقيله هرانى
108060. صباحى بقراط زورنه ايله

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

„ՊՐՈՎՈԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենալաւ Աշխարհում



Ամենաառաջին և ամենաբարձր ամրութեամբ, լաւ յատկութեամբ, չքեղ ֆասոններով և ամենալաւ գործածուող նիւթերից։

ԱՆՊԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

ՊՐՈՎՈԴՆԻԿ

ԱՐՏՕՆԻԱԾ

ԵՐԿՆԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մ Ի Ւ Ն Խ Ե Ւ Վ Է Յ Ս.

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՒՈՒՄ.

ПРОВОДНИКЪ РИГА

1888

Мебельный магазинъ

**БР. ГАЛУМОВЫХЪ,**

*Мадатовская ул., противъ Александровского сада*

Имѣется постаянно большой выборъ:
УМЫВАЛЬНИКОВЪ: англiйскихъ и московскихъ.
КРАВАТЕЙ: англiйскихъ, подносныхъ и мѣстной работы.
ЗЕРКАЛА: простѣночныхъ, для переднихъ и фантазiи
МЯГКОЙ МЕБЕЛИ: „Рококо", модернъ и др. стилей, орѣховой мягкой и вѣнской.
СТУЛЬЕВЪ вѣнскихъ всемiрно извѣстныхъ фабрикъ „ТОННЕТЪ" и „ВОЙЦЕХОВА", а также дубовыхъ, специально для столовыхъ.
ГРОМАДНѢЙШIЙ выборъ буфетовъ, обѣденныхъ, письменныхъ, ломберныхъ и др. столовъ, комодовъ, шифоньерокъ, библiотекъ, гардеробовъ, вѣшалокъ и пр.

**Полная стильная обстановка комнатъ.**

ОСЕННИЙ ТЕЛЯТНИКЪ
Живописцева въ г. Орлѣ.



ԽՆԴՐԻՐ ՀԱՄՈՒՆԻԿ. Դէպքերի սրտակը՝ 50 մարդի համար—25 կոպ. 25 մարդի—15 կոպ. խաղալիկի մէջ—5 մարդու համար՝ 5 կոպ.։ Մի բաւլուց պակաս—չէ վաճառւում։ Ճանապարհածախսի համար 30 կոպ.։ Երեք բաւլուց աւելի ուղարկւում ՀԱՄԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԶԵՂՋ մինչև 20 տոկոս. հասցէն՝ Օրեօլ քաղաք, Ծաղկի հօրթում Փիվոպիսցևի

ԽԱԹԱԲԱԼԱ-Ի

Կոմպլեկտներ փառաւոր կազմած

1906 թւի արժէ 5 ր.
1907 թւի » » 7 ր.
1908 թւի » » 7 ր.

Ցանկացողները պէտք է ուղարկեն կանխավճար 3 ր. որոնց կուղարկենք վերադիր վճարով։

ПЕРВАЯ
художественная хромо-литографiя

С. БЫХОВА

*Тифлисъ, Головинскiй просп. около цирка*

Печатаются всевозможныя литографскiя работы въ разныхъ стиляхъ.
Также всевозможныя ярлыки специально для водочныхъ и винныхъ складовъ и т. п.
ПО САМЫМЪ УМѢРЕНЫМЪ ЦѢНАМЪ
Работы исполняются лучшими европейскими мастерами

Խմբագիր-Հրատարակող՝ ԱՄՏ. ԵՐԻՑԵԱՆ
Скоропечатная „Дзмоба" Московская ул. № 5.

## ՀԵՌԱՒՈՐ ՀԻՒՍԻՍՈՒՄ



Ակամայ ձմեռողներ

## ԳՈՅՈՒԹԵԱՆ ԿՌԻՒԸ




Կանացի այս անվերջ պայքարը և ժամանակակից պահանջները, որից տուժում է հասարակութեան գրպանն ու բարեկեցութիւնը։

ეროვნული ბიბლიოთეკა




ԳՐԱԳԷՏ ԱՂՔԱՏԸ, ՄՆԱՑ ԿՈՅՍԵԼՈՎ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է «ԱՐՇԱԼՈՅՍԻ» ԽՄԲԱԳ.

ՍԵՐԳԷՅ ՋՈՒՐ. ՄԻՐԶՈՅԵԱՆԻՆ



Ոռոգիր դաշտը չորցած Շիրակի,
Շիրակն էլ անպայման քեզ մի բան կանէ։

Քար կամ պղնձից քո յիշատակին
Արձան չկանգնեն, ձոյլ ոսկուց կանեն։